ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 Հոկտեմբերի 2017թ. N 23-Ն

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂ. ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԻ 3 ՀՈՂԱԿՏՈՐ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Հողային Օրենսգրքի» 76-րդ հոդվածի 3-րդ կետով, ՀՀ «Տեղական Ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 05-025-0113-0007 ծածկագրի 0.36839 հա, 05-025-0113-0009 ծածկագրի 0.3033 հա և 05-025-0113-0011 ծածկագրի 0.1 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի հողամասերը մրցույթով տալ վարձակալության 3(երեք) լոտով և մեկնարկային գինը սահմանել 1ար հողամասի համար 320(երեք հարյուր քսան) ՀՀ դրամ 25 տարի ժամկետով:
2. Համայնքի ղեկավարին.
   Հանձնարարել համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողամասերը մրցույթով վարձակալության տրամադրող հանձնաժողովին՝ «Հայաստանի Հանրապետություն» թերթում տալ հայտարարություն մրցույթի անցկացման և սահմանված պայմանների վերաբերյալ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրը:

Ավագանի՝

7 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով

Недействительная подпись

X

Գեղարքունիքի գյուղապետ Կ. Ասատրյան